ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԿԱԾ-ՄԱԾՁԲ-26/07

ք. Երևան **01.04.2026թ.**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս տնօրեն գլխավոր քարտուղար Ա. Ավագյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Գիշյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Կատարողական վարույթի էլեկտրոնային համակարգում» (այսուհետ՝ Համակարգ) «Կատարողական վարույթի մասին» օրենքից բխող և իր կողմից 09.072025թ. կնքված N ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-25/45 պայմանագրի հիման վրա իրականացված ֆունկցիոնալ փոփոխությունների հետագա սպասարկման, ինչպես նաև նույն օրենքից բխող նոր ֆունկցիոնալ փոփոխությունների մշակման և ներդրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ Ծառայություն) համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Պայմանագրի 1.2 կետով սահմանված Ծառայությունները մատուցվում են մինչև 2026 թվականի օգոստոսի 31-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4. անկախ Պայմանագրի 2.1.3. կետերի առկայությունից՝ ցանկացած պահի միակողմանի հրաժարվել Պայմանագրից՝ Կատարողին վճարելով հրաժարվելու օրվա դրությամբ հանձնված Ծառայությունների համար վճարը, ինչպես նաև հատուցելով Պայմանագրից հրաժարվելու օրվա դրությամբ փաստաթղթերով հիմնավորված և Պայմանագրի կատարման նպատակով կատարված փաստացի ծախսերը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Կատարողն իրավունք ունի սույն պայմանագրի գործողության ընթացքում Համակարգում թարմացումները, փոփոխությունները, այլ բարելավումները և ծրագրային սխալների ուղղումները կատարել առանց Պատվիրատուի համաձայնության՝ Պատվիրատուին այդպիսի փոփոխությունների մասին նախապես և ողջամիտ

ժամկետում տեղեկացնելու պայմանով, եթե դրանց կատարումը բխում է սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցումն ապահովելու, Ծառայության մատուցման որակը կամ Համակարգում աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակից:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Ծառայության մատուցման ընթացքում խստորեն պահպանել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջները:

2.4.5 Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու համար երրորդ անձանց կողմից խոչընդոտներ հարուցելու կամ պարտավորությունների կատարումը երրորդ անձանցից ուղղակիորեն կախված լինելու պայմաններում այդ անձանց կողմից համագործակցելուց հրաժարվելու դեպքում այդ մասին անհապաղ՝ բայց ոչ ուշ, քան տասը աշխատանքային օրվա ընթացքում հայտնել Պատվիրատուին: Սույն կետով սահմանված պարտավորությունը չկատարելու դեպքում Կատարողը զրկվում է Պայմանագրի կետանցի կամ այլ պայմանի խախտման դեպքում երրորդ անձանց կողմից համագործակցելուց հրաժարվելու կամ խոչընդոտներ հարուցվելու հիմքով պատասխանատվությունից ազատվելու հնարավորությունից:

2.4.6 Կատարողը պարտավորվում է մինչև սույն պայմանագրի գործողության ժամկետի ավարտը Համակարգում N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրում չնշված որևէ թարմացում, փոփոխություն, համակարգային բարելավում կատարելու կամ ծրագրային որևէ սխալի ուղղում իրականացնելու դեպքում դրանք անհապաղ և առանց որևէ լրացուցիչ վճարի տրամադրել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 13000000 (տասներեք միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1 Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6.2 Կողմը, որի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության կատարումն անհնարին է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, պարտավոր է Պայմանագրի մյուս կողմերին այդ մասին ծանուցել՝ անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքներն ի հայտ գալու պահից 3-օրյա ժամկետում:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Սույն պայմանագրի ստորագրման պահից Պատվիրատուն սեփականության իրավունք է ձեռք բերում ինչպես նախկինում ստեղծված, այնպես էլ սույն պայմանագրի շրջանակներում մշակված (կատարելագործված, փոփոխված) Համակարգի (ներառյալ դրա առանձին բաղադրատարրերի և ծրագրային մոդուլների) նկատմամբ: Կատարողը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1125-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, ամբողջությամբ օտարում է նաև Համակարգում ստեղծված և ստեղծվող ցանկացած մոդուլների օգտագործման իրավունքը: Ծառայությունների մատուցման յուրաքանչյուր փուլի վերջնարդյունք հանդիսացող լրամշակումների հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ Կատարողը Պատվիրատուին է հանձնում նաև դրանց ելակետային տեղեկատվությունը՝ ծրագրային բաց կոդերը (source codes), տվյալների բազաները և փաստաթղթավորումը, որոնք անհրաժեշտ են Համակարգի հետագա ինքնուրույն շահագործման և արդիականացման համար:

7.3 Սույն պայմանագրով Պատվիրատուին օտարվող իրավունքը ներառում է նաև սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում և դրանից հետո Պատվիրատուի, նրա իրավահաջորդների կամ ենթակա մարմինների անսահմանափակ քանակով աշխատակիցների կողմից Համակարգը օգտագործելու, շահագործելու

և բնականոն գործունեությունն ապահովող ցանկացած գործողություն կատարելու ոչնչով չսահմանափակված հնարավորությունը: Սույնով Կողմերը հաստատում են, որ նախկինում շահագործված և սույն պայմանագրով բարելավվող Համակարգի նկատմամբ սեփականության և օգտագործման իրավունքները լիարժեք և անվերադարձ պատկանում են Պատվիրատուին:

7.4 Կատարողը պարտավորվում է ծառայության կամ դրա առանձին մասի արդյունքը հանձնելիս Պատվիրատուին բաց տեսքով՝ առանց կոդավորման, տրամադրել նաև այն բոլոր երրորդ կողմին պատկանող համակարգչային ծրագրերը կամ գրադարանները, որոնք օգտագործվել են սպասարկման կամ լրամշակման ընթացքում: Հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից Պատվիրատուին տրամադրված է համարվում այդ ծրագրերի անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքը՝ այն նույն ծավալով, որն ունի Կատարողը: Սույն փոխանցումը պետք է բավարար լինի, որպեսզի Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարողանա ինքնուրույն իրականացնել Համակարգի ընդլայնում, փոփոխում կամ արդիականացում՝ առանց Կատարողի լրացուցիչ համաձայնության:

7.5 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.6 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր կամ ընտրված մասնակից ճանաչելու որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը: Կատարողը պարտավոր է փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասները:

7.7 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով: Արգելվում է պայմանագրի գնի կամ ծավալների արհեստական փոփոխությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով՝ Կատարողի գրավոր առաջարկի հիման վրա, որը պետք է ներկայացվի ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am կայքում:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով կամ դատական կարգով՝ ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա	ՀՀ, ք. Երևան, Սիսակյան 22, բն. 106
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 900011288025	Հ/Հ 1570077243600100
ՀԿՀՀ 01223338	ՀԿՀՀ 00125657
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
01.04.2026թ. կնքված
N ՀԿԱԾ-ՄԱԾՁԲ-26/07 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	Ժամկետը**
1	72261160/3	• ***ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՅՈՒՄԸ*** **Հարկադիր կատարման դիմում ներկայացնելը պահանջատիրոջ կողմից** **Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների, նոտարների միջև փաստաթղթաշրջանառության և տվյալների էլեկտրոնային եղանակով փոխանակման, գրանցող մարմիններից պարտապանին, պարտապան իրավաբանական անձի իրավասու անձին նույնականացնող, նրա հաշվառման (գտնվելու վայրի) հասցեի, պարտապանի ներկա և նախկին ամուսնական կարգավիճակի, ամուսնուն (ներառյալ՝ նախկին) նույնականացնող, ինչպես նաև պարտապանի՝ կատարողական գործողությունների կատարման համար անհրաժեշտ անձնական և այլ տվյալները, ինչպես նաև «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով նախատեսված օպերատորից կամ ծառայություններ մատուցողից պարտապանի կոնտակտային տվյալները հարկադիր կատարողի կողմից ստանալու կարգեր** - Ծառայությունը և ՀՀ-ում գործող նոտարները **էլեկտրոնային եղանակով փոխանակում են մահացած անձանց մասնակցությամբ** կատարողական վարույթների, չկատարված պարտավորությունների, կատարողական	13000000	1	ք. Երևան, Հալաբյան 41Ա	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 31.08.2026թ.

		վարույթի մահացած մասնակիցների ժառանգության ընդունման, ժառանգությունն ընդունած, այդ թվում՝ ժառանգության իրավունքի վկայագիր ստացած ժառանգների, մահացած պարտապանի ժառանգության վկայագրի բովանդակության (ժառանգական գույքի) մասին տեղեկությունները: - ***Նոտարների էլեկտրոնային համակարգում*** *ցանկացած ժառանգություն վերաբերյալ գրանցում ինքնաշխատ պետք է համադրի մահացած անձի ՀԾՀ-ն Ծառայության շտեմարանի հետ և ինքնաշխատ ուղարկի տեղեկությունը տվյալ մահացածի մասնակցությամբ վարույթները վարողներին:* -Համակարգում նաև պետք է ավելացնել ժառանգության վերաբերյալ տեղեկատու: -Հարկադիր կատարողը համակարգում պետք է կարողանա նոտարների էլեկտրոնային համակարգից էլեկտրոնային եղանակով ստանա պարտապանին տրված ժառանգության իրավունքի վկայագրերի մասին տեղեկատվություն և բեռնի վկայագիրը: **Կապի օպերատորներից հարցում անելու հնարավորություն** -Կատարողական վարույթով պարտապանների վերաբերյալ կոնտակտային տվյալ ստանալու նպատակով հարկադիր կատարողը պետք է կարողանա կատարել էլեկտրոնային հարցում: Համակարգում պետք է ինտեգրված լինեն բոլոր կապի օպերատորների API-ները հարցումների մեխանիզմը ապահովելու համար: -Հարկադիր կատարողը «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով նախատեսված օպերատորից կամ ծառայություններ մատուցողից ստանում է պարտապանի կոնտակտային տվյալներ՝ պարտապանի հետ հաղորդակցության, ինչպես նաև այդ կոնտակտային տվյալների միջոցով պարտապանի գույքի կազմը պարզելու նպատակով: -Հարկադիր կատարողը տվյալները ստանում է Կառավարության սահմանած կարգով՝ այդ կարգում անվանապես նշված				

		գրանցող մարմիններից և պարտապանի կոնտրագենտներից: • **Համակարգում անձանց գրանցելու հնարավորություն** -Համակարգում ավելացնել երրորդ անձ վարույթում գրանցելու հնարավորություն: Երրորդ անձն այն անձն է, որի իրավունքները կամ պարտականությունները կարող են ազդեցություն կրել հարկադիր կատարման միջոցների կիրառման հետևանքով (Օրինակ՝ պարտապանի ամուսինը, պարտապան չհանդիսացող գույքի սեփականտերերը): Երրորդ անձինք վարույթում ներգրավվում են իրենց միջնորդության հիման վրա՝ հարկադիր կատարողի որոշմամբ: -Համակարգում պետք է ստեղծվի հնարավորություն գրանցել պարտապանի ամուսնուն՝ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը պարզելու նպատակով: Պարտապանի ամուսնու վերաբերյալ կատարողական վարույթով պետք է ստեղծել հնարավորություն որոշումներ կայացնելու համար, այդուհանդերձ, Համակարգը պարտապանի ամուսնուն չպետք է դիտարկի որպես առանձին պարտապան, այլ հնարավոր լինի կիրառել արգելանքներ կամ կատարել հարցումներ, սակայն թե որոշումներում, թե փոխանակվող հաղորդագրություններում ամուսինը չարտացոլվի որպես՝ առանձին պարտապան, այլ պարտապանի ամուսին: -Հարկադիր կատարողն իր որոշմամբ երրորդ անձին հանում է կատարողական վարույթի մասնակիցների կազմից, եթե վերացել են նրա ներգրավման հիմքերը: -Համակարգում նախատեսել, որ մեկ կատարողական վարույթին կարող են մասնակցել մեկից ավելի պահանջատեր, պարտապան կամ երրորդ անձ, որոնցից յուրաքանչյուրը վարույթում հանդես է գալիս ինքնուրույն: -Համակարգում ավելացնել մասնակիցների (պարտապան, պահանջատեր, երրորդ անձ) իրավահաջորդության մեխանիզմ: -Դրամական պահանջի հարկադիր կատարման վարույթով մահացած պարտապանի ժառանգները կրում են				

		համապարտ պատասխանատվություն, իսկ նրանց գույքի և եկամուտների վրա բռնագանձումը տարածվում է ընդհանուր կարգով՝ ինչպես ժառանգությամբ անցած, այնպես էլ ժառանգների այլ գույքի և եկամուտների վրա, **բայց ոչ ավելի, քան տվյալ ժառանգին անցած ժառանգական գույքի շուկայական արժեքի չափով**: • **Վճարահաշվարկային ծառայություն մատուցող կազմակերպության միջոցով բռնագանձման ենթակա գումարի արգելադրում և բռնագանձում.** Վճարահաշվարկային կազմակերպություններում պարտապանի էլեկտրոնային փողի հաշվառման հաշվին (էլեկտրոնային դրամապանակում) առկա դրամական միջոցները հանդիսանում են բռնագանձման ենթակա գույք, ուստիև Համակագը պետք է թույլ տա առևտրային բանկերի օրինակով արգելադրել, բռնագանձել այդ դրամական միջոցները, ինչպես նաև հիմքերի առկայության դեպքում արգելանքից հանել դրանք: • **Ծանուցման մեխանիզմներ.** Կատարողական վարույթի փաստաթղթերը դրանց հասցեատերերին ուղարկվում (տրամադրվում) են հետևյալ եղանակներով, ընդ որում՝ յուրաքանչյուր հաջորդ եղանակը կիրառվում է նախորդ եղանակի կիրառման անհնարինության դեպքում. 1) անձնական գրասենյակ հարթակով. 2) Ծառայության և տվյալ հասցեատիրոջ միջև գործող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով. 3) էլեկտրոնային փոստով. 4) փոստային առաքմամբ. 5) հրապարակային ծանուցմամբ: • **<u>Էլեկտրոնային հաղորդակցությունը</u>** • Կատարողը պետք է հնարավորության չափով ապահովի Համակարգի միջոցով կայացված որոշումների և այլ փաստաթղթերի ուղարկելու հնարավորությունը՝ այդ թվում				

		համակարգը համակցելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների, նոտարների միջև կառավարության սահմանված կարգով: • **«Անձնական գրասենյակ» հարթակ** Ծառայության պաշտոնական կայքէջում գործող «Անձնական գրասենյակ» համակարգում պետք է ներդրվեն այնպիսի գործքիներ, որպեսզի անձը գրանցվելու դեպքում հասանելիություն ունենա իր վերաբերյալ հարուցված կատարողական վարույթի փաստաթղթերին ստանա դրանք և պատճենահանի: Հարթակում նոր փաստաթուղթ տեղադրվելիս տվյալ անձն այդ մասին անհապաղ պետք է ստանա ծանուցվում հարթակում գրանցվելիս իր տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող հաղորդագրության միջոցով, եթե չի ապաբաժանորդագրվել էլեկտրոնային փոստով որոշակի տեսակի կամ բոլոր ծանուցումներից: 2. Անձնական գրասենյակ հարթակը կարող է ներառել նաև՝ 1) վարույթի մասնակցի կողմից դիմումներ, միջնորդություններ, դիրքորոշումներ և այլ փաստաթղթեր ներկայացնելու հնարավորությունը. 2) վարույթում որևէ նոր նյութի ավելացման (ներառյալ վարույթի այլ մասնակիցների կողմից) մասին վարույթի մասնակցի անհապաղ ծանուցումը համակարգի ներսում, ինչպես նաև վարույթի մասնակցի նշած էլեկտրոնային փոստով, եթե վերջինս չի ապաբաժանորդագրվել էլեկտրոնային փոստով որոշակի տեսակի կամ բոլոր ծանուցումներից. 3) բռնագանձման ենթակա գումարի վճարման հնարավորություն՝ վճարահաշվարկային ծառայություն մատուցող կազմակերպության միջոցով: -Համակարգը պետք է թույլ տա, որպեսզի կատարողական վարույթի փաստաթղթերն էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով կամ էլեկտրոնային փոստով ուղարկվելու դեպքում հասցեատերն ստանան փաստաթղթի տեքստը կամ համապատասխան էլեկտրոնային հղումը,				

		որի միջոցով փաստաթուղթը կարող է հասանելի դառնալ նրան: - Անձնական գրասենյակ հարթակը պետք է հնարավորություն տա պահանջատեր կողմին ներկայացնելու կատարման ենթակա ակտի հարկադիր կատարման վերաբերյալ դիմում: • **ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ** -Համակարգում կատարողական ծախսը վերանվանել կատարողական վճար: -Համակարգում կատարողական վճարի հաշվարկման ձևը վերանայել և դարձնել դինամիկ: -Վարույթի ֆինանսական մոդուլում ավելացնել «Փաստացի կատարված ծախսեր» բլոկ, որում հարկադիր կատարողը պետք է լրացնի տվյալ վարույթի կատարման ընթացում կատարված փաստացի ծախսերը. • Ամսաթիվ • Ծախսի նպատակը • Գումար • Հիմք փաստաթղթեր -Վարույթի ֆինանսական մոդուլում ավելացնել «կատարված ծախսերի կանխավճար» բլոկ, որում հարկադիր կատարողը պետք է լրացնի տվյալ վարույթի համար վճարված կանխավճարները. • Ամսաթիվ • Նպատակը • Գումար • Հիմք փաստաթղթեր -Դրամական պանաջների կատարողական վարույթներով կատարողական վճարի հաշվարկման մոդելի նախնական նկարագիր՝ հիմք «Կատարողական վարույթի մասին» օրենքի 28-րդ հոդված 1. Եթե < 10.000, ապա Կայուն գումար = բոն.ենթ գումար x 50% 2. Եթե >= 10.000, ապա Կայուն գումար = 5000 3. Եթե >= 100.000, ապա 5000+ բոն.ենթ գումար x 2%, եթե հարուցման ամսաթիվ				

		+14 օրում է բռնագանձվել կամ անկանխիկ մարվել 4. Եթե >= 100.000, ապա 5000+ բռն.ենթ գումարի մնացորդ x 4%, եթե հարուցման ամսաթիվ +14 օրից հետո է բռնագանձվել կամ անկանխիկ մարվել 5. Եթե >= 100.000, ապա 5000+ բռն.ենթ գումար x 5%, եթե կանխիկ է մարվել (առգրավվել): Այս կետը վերաբերվում է հարկադիր կատարողի կողմից առգրավմանը: 6. Եթե վճարումը կատարվել է սպասարկման գրասենյակում, ապա գործում 1-4-րդ կետերի հաշվարկը, ոչ թե 5-րդ: -Այս մեխանիզմը պետք է ներդրվի վճարահաշվարկային կազմակերպություններում՝ հնարավորություն ստեղծելով պարտավորությունը մարելու դեպքում ապահովել ավտոմատ կարճման և արգելանքներից ազատման մեխանիզմը: -Անհրաժեշտ է բանկերում արգելանք կիրառել 2 անգամ, մեկը հարուցելուց, մյուսը 15-րդ օրը ավտոմատ մնացորդի և կատ. վճարի նոր չափի հանրագումարով: **-Կատարողական վճարները ոչ դրամական պահանջներով և ապահովման վարույթներով** -Ոչ դրամական պահանջով կարարողական վարույթերի համար պետք է ավելացնել «Կամավոր կատարման ժամկետի»՝ ավարտի ամսաթիվ՝ որպես ոչ պարտադիր դաշտ: -Ոչ դրամական պահանջի վարույթներով (բացառությամբ հայցի ապահովման վարույթների) եթե լրացված է «Կամավոր կատարման ժամկետ» դաշտը և այդ դաշտում լրացված ամսաթիվը անցել է (կամովին չի կատարել), ապա. Փաստացի կատարված ծախս x 3 Եթե <= 100.000, ապա կատարողակն վճար = 100,000				

		Եթե > 100.000, ապա կատարողական վճար = փաստաց կատ.ծախս x 3 Փաստացի կատարված ծախս >=500.000 և < 1.000.000 Կատարողական վճարը = 1,500,000 Փաստացի կատարված ծախս >=1,000,000 Կատարողական վճար = փաստաց կատ.ծախս x 150% Եթե ոչ դրամական պահանջի վարույթով «Կամավոր կատարման ժամկետ» դաշտը լրացված չէ, ապա՝ Կատարողական վճար = փաստացի կատարված կատարողական ծախսեր, եթե դրանց հանրագումարը > 5000-ից, եթե < 5000, ապա՝ 5000: Յուրաքանչյուր ոչ դրամական պահանջի վարույթներով (բացառությամբ հայցի ապահովման վարույթների) փաստացի կատարված ծախս ավելացնելիս, համակարգը պետք է կատարի հաշվարկ վերը նշված ձևով և ինքնաշխատ վճարահաշվարկային համակարգերի համար ապահովի այդ հաշվարկով ստացված գումարը վճարելու հնարավորություն: • **Ածանցյալ կատարողական վարույթ** Հարկադիր կատարման ենթակա ակտերի շարքին է դասվել նաև հարկադիր կատարողի որոշումները, որոնք կարող են կատարվել ինչպես տվյալ կատարողական վարույթի (հիմնական կատարողական վարույթի) շրջանակներում (եթե այդ որոշմամբ պարտականություններ կամ իրավունքի սահմանափակումներ են սահմանված կատարողական վարույթի կողմի նկատմամբ), այնպես էլ, ըստ անհրաժեշտության, ածանցյալ կատարողական վարույթի շրջանակներում, որը առանձնացվում է հիմնական կատարողական վարույթից: **Համակարգում պետք է ապահովվի կատարողական վարույթից ածանցյալ վարույթ առանձնացնելու հնարավորություն այն դեպքում, երբ կատարողական վարույթ է հարուցվում առանց հարկադիր կատարման դիմումի,**				

		հենց հարկադիր կատարողի որոշումների հիման վրա: Ածանցյալ կատարողական վարույթը նախատեսված է այնպիսի իրավիճակների համար, երբ առանձին պարտականություններ կամ պահանջներ առաջանում են ոչ միայն պարտապանի նկատմամբ, այլ նաև այնպիսի երրորդ անձանց նկատմամբ, որոնք կատարողական վարույթի մասնակցի կարգավիճակ չեն ստացել: Օրինակ, եթե փորձաքննության իրականացմանը խոչընդոտում է ոչ թե պարտապանը, այլ պարտապանի հետ համասեփականատեր հանդիսացող և կատարողական վարույթի մասնակից չհանդիսացող անձը, ապա փորձաքննության իրականացման խոչընդոտները վերացնելու նպատակով հարկադիր կատարողը պետք է հարուցի ածանցյալ կատարողական վարույթ: Այսպիսով ածանցյալ վարույթ կարող է հարուցվել հարկադիր կատարողի որոշման հիման վրա, որտեղ պարտապանը այն անձն է, որը պետք է կատարի կամ զերծ մնա որոշակի գործողություն կատարելուց, որը սակայն հիմնական կատարման ակտով ակտով պարտապանը չէ: - Ածանցյալ կատարողական վարույթը չի ենթադրում պահանջատիրոջ մասնակցություն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում պահանջատիրոջ կատարած ծախսերը հօգուտ վերջինիս բռնագանձելու որոշման կատարման վարույթի: -Ածանցյալ վարույթը կարող է մայր վարույթից տարբերվող բնույթի լինել: • **Կատարողական վարույթները միացնելը և առանձնացնելը** Կատարման ենթակա ակտերի առավել արդյունավետ կատարման նպատակով միմյանց հետ փոխկապակցված կամ կատարողական վարույթի մասնակիցների լրիվ կամ մասնակի համընկնող կազմ ունեցող մի քանի կատարողական վարույթներ կարող են միացվել մեկ վարույթում, կամ մեկ կատարողական վարույթից կարող են առանձնացվել առանձին պահանջներով վարույթներ:				

		• Համակարգում պետք է ստեղծվի հնարավորություն, որպեսզի միմյանց հետ փոխկապակցված վարույթները միացվեն կամ առանձնացվեն: Միացման արդյունքում պետք է ստեղծվի այլ համարով կատարողական վարույթ որտեղ կգներացվեն կայացված որոշումները և կնույնականացվեն այն հիմնական վարույթիների հետ որոնք միացվել են: **Հայաստանի Հանրապետության տարածքից հետախուզվող անձի և Տրանսպորտային միջոցի ելքի իրավունքի սահմանափակումը** -Համակարգը պետք է ինտեգրված լինի Ազգային անվտանգության ծառայության ՍԷԿՏ համակարգին: Մասնավորապես՝ 1. Հայաստանի Հանրապետությունից հետախուզվող անձի ելքի արգելք նախատեսող դատական ակտի հիման վրա հարկադիր կատարողն իր որոշմամբ սահմանափակում է Հայաստանի Հանրապետությունից հետախուզվող անձի ելքի իրավունքը, 2. Հարկադիր կատարողը Հայաստանի Հանրապետությունից հետախուզվող պարտապանի ելքի իրավունքի սահմանափակման և դրա վերացման մասին անհրաժեշտ տվյալներն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում **Կառավարության սահմանած կարգով** մուտքագրում է սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ, 3. Պետք է նաև ապահովվել հետախուզվող տրանսպորտային միջոցի ելքի սահմանափակում, որը ինքնաշխատ պետք է դադարի կատարողական վարույթը կարճելիս: • **Համակարգում Հարկադիր կատարողին որոշակի տեղեկատվության ստացման կամ որոշման կայացման օրվանից որոշակի ժամկետը անցած լինելու մասին հիշեցումների մեխանիզմ:**				

		-Համակարգում պետք է ստեղծվի հնարավորություն, որի միջոցով վարույթ իրականացնող ստորաբաժանումը կծանուցվի (Համակարգում կարտացոլվի) որոշակի տեսակի որոշումների ժամկետի անցած լինելու վերաբերյալ: - Համակարգում պետք է ստեղծվի հնարավորություն, որի միջոցով վարույթ իրականացնող ստորաբաժանումը կծանուցվի (Համակարգում կարտացոլվի) կատարողական վարույթին կցվող կամ այլ համակարգերից ստացվող տեղեկատվության արտացոլել: -Այն դեպքում, երբ տվյալ վարույթը ավարտված է, հարկադիր կատարողը արձակուրդում է կամ այլևս չի ծառայում տվյալ բաժնում, ստացվող տեղեկատվության վերաբերյալ հիշեցում ուղարկել (արտացոլել) բաժնի պետի աշխատատեղում: -Համակարգում պետք է լրամշակել նաև Մաքսային ծառայության արգելանքի «Կանաչ լույս» մեխանիզմը ստորև նշված «Կատարողական վարույթի մասին» օրենքի 97-րդ համապատասխան և ապահովել հարկադիր կատարողին հիշեցնելու մեխանիզմը. -Պարտապանի գույքը մաքսային որևէ ընթացակարգով հայտարարագրվելու դեպքում մաքսային մարմինը հարկադիր կատարողին հայտնում է հայտարարված մաքսային ընթացակարգի, գույքի, դրա քանակական և որակական հատկանիշների, մաքսային արժեքի մասին՝ այդ տեղեկություններն ուղարկելուց **հետո հինգ օրվա ընթացքում ձեռնպահ մնալով տվյալ գույքի բաց թողումից**, եթե սույն էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և տվյալների փոխանակման կարգով ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ: **Եթե նշված ժամկետի ընթացքում հարկադիր կատարողը մաքսային մարմնին չի ներկայացնում պարտապանի գույքն առգրավելու մասին որոշում, ապա այն բաց թողնելու՝ սույն մասով նախատեսված սահմանափակումը վերանում է:** • **Բռնագանձված գումարների բաշխման հերթականությունը և կարգը**				

		Համակարգում բաշխման կարգը համապատասխանեցնել «Կատարողական վարույթի մասին» օրենքի 102-րդ հոդվածին: 1. Բռնագանձված գումարները մեկից ավելի պահանջատերերի միջև հարկադիր կատարողի որոշմամբ բաշխվում են պահանջների հետևյալ հերթականությամբ. 1) գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու հետ կապված կատարողական վճարները՝ միայն գրավի առարկայի իրացումից ստացված գումարի հաշվին. 2) գրավով ապահովված պահանջները՝ միայն գրավի առարկայի իրացումից ստացված գումարի հաշվին. 3) ալիմենտային, կյանքին, առողջությանը, կերակրողի մահվամբ և հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման պահանջները. 4) աշխատանքային պայմանագրերով աշխատողի և հեղինակային պայմանագրերով հեղինակի պահանջները. 5) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի օգտին հատուցման ենթակա դատական և գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու հետ չկապված կատարողական վճարները. 6) մինչև 100 հազար դրամի չափով այլ պահանջները, բայց 300 հազար դրամը չգերազանցող ընդհանուր չափով. 7) սույն մասում չնշված այլ պահանջները. 8) կատարողական վարույթի ընթացքում պարտապանի նկատմամբ նշանակված տուգանքի գումարը: 2. Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: 3. Միևնույն հերթի պահանջները բավարարվում են ըստ պահանջների ներկայացման ժամանակագրական հաջորդականության: Ընդ որում, պահանջների ներկայացման օր է համարվում՝				

		1) սույն օրենքով սահմանված կարգով հարկադիր կատարման դիմում ներկայացվելու օրը. 2) եթե հարկադիր կատարման դիմում ներկայացվելու օրվա դրությամբ առկա է տվյալ դրամական պահանջի ապահովման չկարճված վարույթ, ապա՝ դրամական պահանջի ապահովման վարույթի հարուցման հիմք հանդիսացած հարկադիր կատարման դիմում ներկայացվելու օրը. 3) հարկադիր կատարողի որոշման հարկադիր կատարման դեպքում՝ այդ որոշման կայացման օրը: 4. Նույն օրը ներկայացված միևնույն հերթի պահանջները բավարարվում են դրանց չափերին համամասնորեն: 5. Բոլոր պահանջները բավարարելուց հետո մնացած գումարը վերադարձվում է պարտապանին: • **Հաշվետվությունների համակարգը.** Համակարգը պետք է կարողանա գեներացնել հաշվետվությունները ներառելով միաժամանակ երկու համակարգերի տվյալները (հարուցումների, վերսկսումների, կարճումների, ավարտների, կասեցումների առանձին տողեր՝ հին ու նոր օրենքներով, դրանց ընդհանուր թվերը, նույնը՝ բռնգանձումների և այլ տվյալների ուղղություններով) • Անհրաժեշտ է համակարգում նախատեսել Օրենքին համապատասխան բոլոր կարգաբերումները, որոշումները, ձևաթղթերը, ինքնաշխատ գործողությունների տրամաբանությունները և անցնցում անցնել նոր կարգաբերումներին: ➢ Կատարողը պետք է ծրագրային գործիքակազմերի ներդրմամբ և գործող հարթակների հնարավորությունների ընդլայնմամբ ապահովի Ծառայության թեժ գծի ծանրաբեռնվածության նվազեցումը:				

		➢ Կատարողը անհրաժեշտության դեպքում պետք է ծրագրատեխնիկական աջակցություն ցուցաբերի այն դեպքերում, երբ հարկադիր կատարողների կողմից պարտապանի տնտեսությունում գույքագրման ժամանակ կօգտագործվի համապատասխան դյուրակիր սարքավորումներ: ➢ Կատարող պետք է սպասարկի Համակարգում նախկինում ստեղծած մոդուլները, ենթահամակրեգը, ինչպես նաև առկա Համակարգում պետք է իրականացնի ցանկացած ընթացիկ ծրագրային փոփոխություններ, որոնք չեն ենթադրում գործող մոդուլների, գործիքների ամբողջական փոփոխություն				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության
Հ/Հ 900011288025
ՀՎՀՀ 01223338

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Սիսակյան 22, բն. 106
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570077243600100
ՀՎՀՀ 00125657

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
01.04.2026թ. կնքված
N ՀԿԱԾ-ՄԱԾՁԲ-26/07 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160/3	ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	-	-	-	-	9750000	9750000	12350000	12350000	12350000	13000000	13000000	13000000	**13000000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության
Հ/Հ 900011288025
ՀՎՀՀ 01223338

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Սիսակյան 22, բն. 106
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570077243600100
ՀՎՀՀ 00125657

(ստորագրություն)
Կ.Տ.

Jadtipnup

«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ»
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԿՈԼԵԿՏԻՎ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ARMAUTHOR"
Non-governmental collective management organization of copyright and related rights

"АРМАВТОР"
Общественная организация по коллективному управлению авторскими и смежными правами

N 07/520
19.12.2019թ.

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԻ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՈՒՄ

ԳԻՇՅԱՆ ԴԻԱՆԱ ՄՈՒՇԵՂԻ
«ԶԵԹ ԹԵՔՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ի տնօրեն
Հասցե- ք.Երևան, Միասկյան 22, բն.106
Հեռ.- +374 77 71-86-10
Անձնագիր- 000739565,012,27.08.2013թ.

ՀՀ «Հայհեղինակ» կազմակերպությունը տեղեկացնում է, որ **Դիանա Գիշյանի** կողմից ներկայացված՝

« Z - FLOW »

անվանումով համակարգչային ծրագիրը ի պահ է վերցված կազմակերպությունում 2019թ. դեկտեմբերի 17 -ին N 08/5231 թվի ներքո:

«ԶԵԹ ԹԵՔՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն **Դիանա Գիշյանի** հավաստում է, որ այն հանդիսանում է վերոնշյալ ծրագրի նկատմամբ իրավատերը, ինչպես նաև, որ ներկայացված տեղեկությունները ճշգրիտ են, համապատասխանում են իրականությանը և այլ անձանց իրավունքներն իր կողմից չեն խախտվել:

Որևէ անձ, ով գիտակցաբար կեղծիք է թույլ տալիս նյութը ի պահ հանձնելու ընթացքում, կենթարկվի պատասխանատվության օրենքով սահմանված կարգով /Հիմք՝ **«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»** ՀՀ օրենք, հոդ.65-69/:

ՏՆՕՐԵՆ Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն, 375009 Երևան, Կորյունի փող. 19ա Հեռ. +374 52 63 93, Հեռ/Ֆաքս. + 374 52 94 92
Республика Армения, 375009 Ереван, ул. Корюна, 19а Тел. +374 1 52 63 93 Факс: +374 1 52 94 92
19a Koryun str., 375009 Yerevan, Republic of Armenia Tel.:+374 1 52 63 93 Tel/ Fax: + 374 1 52 94 92
http://www.armauthor.am e-mail: international@armauthor.am